

ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԴՊՐՈՅՆ ԵՎ ԿՈՍԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԴԱՍԱԳԻՐՔ ՄԱՏՅԱՆԸ^{1*}

Բանալի բառեր – Կոստանդ Ջուղայեցի, Աշխարհաժողով, Վասն նորայրու մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատ, Նոր Ջուղա, Սբ. Ամենափրկիչ Վանքի դպրոց, գաղթօջախ, Նոր Ջուղայի վաճառականներ, վաճառականական ծեռնարկ, վաճառական հեղինակներ, Նոր Ջուղայի գրական ժառանգություն, Նոր Ջուղայի մատենագրություն

Մուտք

1604-1605 թթ. Շահաբբասի հրամանով տեղի ունեցած հայոց մեծ բռնազաղթի հետևանքով Արևելյան Հայաստանից, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի բազմաթիվ շրջաններից տեղահանված ժողովուրդը անցնում է ամենադժան փորձությունների միջով: Այս սոսկալի դեպքերի մասին մանրամասն նկարագրել է Նոր Ջուղայի առաջին պատմագիր Առաքել Դավրիժեցին «Իսկ ողորմելի ժողովրդեանն հայեցեալյառաջ զանհուն գետն տեսանէին իբրև ըզծով՝ ծով՝ որ խեղդէր, և յետուստ զսուրն Պարսից որ սպանաներ, և ճարակ փախչելոյ ո՛չ գտանիր»²: Այս կոտորածից մազապուրծ ժողովուրդը վերջապես հասնում է Պարսկաստան և հաստատվում մայրաքաղաք Սպահանում և դրա շրջակա գյուղերում ու այլ քաղաքներում: «որք քաղաքացիք էին, ՚ի նմին քաղաքի գետեղեցուցեալ բնակեցուցին, և որք շինականք էին և գեղականք ՚ի շրջակայ գաւառսն քաղաքին սպահանու բնակեցուցին»³:

Հայաստանի շեն ու ծաղկուն Ջուղա քաղաքի բնակիչները 1606 թին հիմնադրեցին Վանքը և այն կոչեցին Հին Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ Վանքի անունով: Դավրիժեցու բնորոշմամբ «բազմահանճար և խելացի» Շահ Աբբաս I թագավորը, տեսնելով ջուղայեցիների ստեղծարար էություն-

^{1*} Ընդունվել է տպագրության 12.04. 2022 թ.

² Դավրիժեցի Ա., Գիրք Պատմության շարադրեալ Վարդապետին Առաքել Դավրիժեցու, Ամստերդամ, 1669, էջ 42:

³ Դավրիժեցի Ա., նույն տեղը, էջ 45:

ևր, դիմեց տարբեր հնարքների, որպեսզի ժողովուրդը մնա և արարի իր երկրում «գի աշխարհս մեր շինեսցի՝ և ազգս մեր յաւելցի»¹:

Այնուհետև կարճ ժամանակահատվածում Սեֆյան մայրաքաղաք Սպահանի հայկական արվարձան Նոր Ջուղան դարձավ իրանական մետաքսի արտահանման պետական մենաշնորհի ունեցող ջուղայեցի վաճառականների կենտրոն, որը, ընդլայնելով իր գործունեության աշխարհագրական սահմանները, 17-րդ դարի երկրորդ կեսին Նոր Ջուղան դարձրեց հայկական առևտրական ցանցի կենտրոն, որը ձգվում էր Մաևիլայից մինչև Լոնդոն ու Ամստերդամ²:

Այսպիսով «լինել-չլինելու» երկընտրանքի առաջ կանգնած Նոր Ջուղան կարճ ժամանակահատվածում վերածվում է 17-18-րդ դարերի հայ հասարակական-քաղաքական, գիտական և հոգևոր-մշակութային կյանքի դեկոր վարող կենտրոնի:

Ուժեղ էր Սբ. Ամենափրկիչ Վանքի միաբանությունը, և այն ուղղակիորեն համեմատական էր գաղթօջախի հզորությանը: Պատմաբանները բազմիցս անդրադարձել են այս միաբանության՝ 17-18-րդ դարերի հայ իրականության մեջ խաղացած դերին՝ դրանով բացատրելով «...թե հակամիարարական պայքարում Նոր Ջուղայի խաղացած բացառիկ դերը և թե Էջմիածնի գործունեության վրա ունեցած վճռորոշ ազդեցությունը»³:

Այսօր անհերքելի է այն փաստը, որ Նոր Ջուղան իր հոգևոր, մշակութային, գիտական և տնտեսական նվաճումների, չորս հարյուրամյակներ անց չմարող համբավի համար պարտական է Սբ. Ամենափրկիչ Վանքի դպրոցին:

Սուրբ Ամենափրկիչ Վանքի դպրոցը

Սպահանի Սուրբ Ամենափրկիչ Վանքի գլխավոր մուտքի դիմաց գտնվում է Վանքի երկրորդ առաջնորդ խաչատուր Վրդ. Կեսարացու⁴ արձանը, ում շնորհիվ 1630-ական թվականներին հիմնվել է Վանքի դպրոցը, որը ժամանակակիցները կոչել են համալսարան: Այս մասին պատմագիր խաչատուր Ջուղայեցին վկայում է. «Սա յօրինեաց գիամալսարանս՝ յորում ուսուցաներ և մարգեր գիամբակագոյնսն ի գիտութիւնս

1 Դավրիժեցի, Լույս տեղը էջ 67:

2 Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, № 4(5), Եր., 2019, էջ 4:

3 Միրզոյան Հ., Հովհաննես Մրցուզ Ջուղայեցի, Եր., 2001, էջ 38:

4 Թեպետ նա դարձավ եպիսկոպոս, բայց պատմության մեջ մնաց վարդապետ անունով: Վերջինս Նոր Ջուղայում հիմնում է տպարան, որը Իրանի և ամբողջ Միջին Արևելքի առաջին տպարանն է և յոթերորդ հայկական տպարանը ողջ աշխարհում:

ինոց և Նորոց կտակարանաց, և զհամայն արհեստս ազատականս, և զգերբնազանցականս»¹:

Կրթության և հոգևոր դաստիարակության առանցքային դերից բացի Վանքի դպրոցը կենտրոնական տեղ էր զբաղեցնում նաև վաճառականության ու համաշխարհային առևտրի բնագավառում հայ վաճառականներին կրթող համակարգում, որտեղ մրցակցում էր կաթոլիկ քարոզիչների ուսումնական հաստատությունների ու առտնին վաճառականներ կրթողների հետ²:

Կեսարացու աշակերտ Դավիթ առաջնորդը քահանաներին ուղղված մի հանդիմանական նամակում, ընդգծելով դպրոցում կրթություն ստանալու կարևորությունը, գրում է. «Երբ մեր նախնիները հաստատուեցին այստեղ, կառուցեցին Ս. Վանքը, որից յետոյ դրա հետ եւ կարգաւորեցին Վանքի դպրոցը, որպէսզի բոլոր մանուկներն այստեղ կարդան եւ սովորեն»³:

Նոր Ջուղայի պատմագիր Հարություն Տեր-Հովհանյանը Նույնպես վկայում է այն մասին, որ «Ջուղայի սկզբնական հիմնարկութիւնից յետոյ, Ս. Ամենափրկիչ Վանքում դպրատուն է եղել»⁴: Այստեղ դասավանդվել են Աստվածաշունչ, քերականություն, իմաստասիրություն, երաժշտություն, պոետիկա, բնական գիտություններ, համարողական արվեստ, ինչպես նաև գրվել են դասագրքեր ու գիտական աշխատություններ:

Այս դպրոցում են սովորել Նոր Ջուղայի հոգևոր-մշակութային կյանքի նշանավոր շատ գործիչներ, ինչպիսիք են՝ Հակոբ, Դավիթ, Սիմեոն, Հովհաննես Մրջուզ Ջուղայեցիները:

Հարություն Տեր-Հովհանյանը, որպես այս դպրոցի ուսուցիչներ, հիշատակում է միայն Խաչատուր, Դավիթ, Ստեփանոս և Կոստանդ Ջուղայեցիների անունները՝ վերջինիս մասին հատկապես նշելով, որ «ունեցել է 250 աշակերտներ»⁵:

Սա այն Կոստանդն է, ով հայտնի է որպես Վաճառականության դպրոցի ուսուցիչ: Նա 17-րդ դարի Նոր Ջուղայի առանցքային դեմքերից մեկն է՝ վաճառական, վարդապետ, մանկավարժ Կոստանդ (նաև՝ Կոստանդին) Ջուղայեցին, վաճառականության համար կազմված հայերեն

1 Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, աշխատութեամբ՝ Բ. Աղաւելեանցի, Վաղարշապատ, 1905, էջ 116:

2 Ջուղայեցիներն առևտրական կրթություն ստանալու երեք ճանապարհ ունեին՝ Սբ. Ամենափրկիչ Վանքի դպրոցը, կաթոլիկ քարոզիչների ուսումնական հաստատություններն ու առտնին կրթությունը:(Տե՛ս Բաղդարյան Ս., նշվ. ախ, էջ 71):

3 Յ. Տեր-Յովհաննես, Պատմութիւն Նոր Ջուղայի, Նոր Ջուղա, 2008, էջ 586:

4 Տե՛ս Նույն տեղը::

5 Տե՛ս Նույն տեղը:

առաջին ձեռնարկի՝ «Աշխարհաժողով» դասագրքի հեղինակը: Նրա գիրքը դասանվանով էլ է ոչ միայն Ջուղայի դպրոցում, այլև, տարածվելով հայ վաճառականական ցանցում, դարձել է այս կենտրոնի հաջողության գրավականը:

Կոստանոյ Ջուղայեցու կյանքը և գործունեությունը

Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ Վանքի դիվանում ու Վենետիկի պետական արխիվում պահվող հայկական առևտրական փաստաթղթերը պահպանել են Ռամազի որդի Կոստանոյի մասին կենսագրական կարևոր տեղեկություններ՝ հնարավորություն տալով բացահայտելու Նրա անձը և հյուսելու Նրա կյանքի ու վաճառականական գործունեության մասին ընդհանուր պատկերը:

Կոստանոյ Ջուղայեցին ծնվել է մոտավորապես 1630-ական թթ. Սեֆյան Իրանի մայրաքաղաք Սպահանի հայկական արվարձան Նոր Ջուղայում՝ համարվելով Շահ Աբբաս I-ի որդեգրած «այրված հողի» քաղաքականության հետևանքով տեղահանված ու Իրանում վերաբնակեցված սերնդի ժառանգներից:

Կոստանոյ Ջուղայեցին ծնվել է մոտավորապես 1630-ական թթ. Ռամազի ու Չիթանի ընտանիքում և ունեցել մեկ որդի ու մեկ դուստր՝ Ալեքսանդր ու Մարմար անուններով, ընդ որում խոսքը վերաբերում է հետագայում Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդի ու Ամենայն հայոց կաթողիկոսի աթոռներն զբաղեցրած Ալեքսանդր Ջուղայեցուն:¹

Կոստանոյ Ջուղայեցու գործունեության առաջին շրջանի մասին փաստերի բացակայությունը որոշ մասնագետների ենթադրել են տվել, որ վերջինս կնոջ մահից հետո պարզապես նվիրվել է հոգևոր կյանքին:

«Կոստանոյ Ջուղայեցի. Աշխարհաժողով» աշխատության հեղինակ Բալդայանը բազմաթիվ հետաքրքրական փաստեր է բերում Կոստանոյի վաճառականական կյանքի ու գործունեության վերաբերյալ: Նրա առևտրական գործերի մասին առկա փաստերի շարքում հիշատակվում է մի կոմենդա-պայմանագիր², որտեղ աչքի են ընկնում Կոստանոյ վաճառականի՝ Եվրոպայից Նոր Ջուղա 259 միավոր գրականություն տեղեփոխելու մասին փաստեր: Սա նշանակում է, որ ապագա մանկավարժը ներգրավված է եղել հայ հնատիպ գրքերի վաճառքի շուկայում:

1 Բալդայան Ս., նույն տեղը, էջ 12:

2 Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ Վանքի դիվան, Չանազան Նիպերով գրութիւններ, կալածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման) (Ըստ Բալդայանի):

Վաճառականությունը թողնելուց հետո Կոստանդ Ջուղայեցին 1683 թ-ին անցնում է «ի սպասավորություն սուրբ Ամենափրկիչ վանաց»¹: Վանքի դպրոցում վարած վաճառականական դասընթացները մեծ համբավ բերեցին նրան, ինչի մասին վկայում են բազմաթիվ հիշատակարաններ. «զԿոստանդ միայնակեացն, որ է դպրապետ եւ ուսուցիչ ԲՃ և Ծ (250) մանկաց...»²:

Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգությունը

Կոստանդ Ջուղայեցու վաճառականական գործունեությունը, Վանքի դպրոցում նրա կատարած մանկավարժական մեծ աշխատանքը, Նոր Ջուղայի և առհասարակ հայ վաճառականական դպրոցի թողած իր ավանդները մեզ թույլ են տալիս նրան դասելու 17-րդ դարի հայ վաճառական-հեղինակների շարքին:

Թեև Լեոն հայ վաճառականների գրականության մասին խոսելիս հիշատակում է միայն Չաքարիա Ագուլեցու անունը, սակայն 1660-70-ական թթ. առևտրական գործունեություն ծավալած Կոստանդ Ջուղայեցին հետագայում կազմած վաճառականական ձեռնարկներով անկասկած համալրում է 17-րդ դարի հայ վաճառական-հեղինակների խիստ նոսր շարքը:

Սարգիս Բալդարյանը Կոստանդ Ջուղայեցուն համարում է վաճառականական գրականության ժանրի հիմնադիրը հայ գրականության մեջ:³ Վերջինս իր վաճառականական գործունեության տարիների ամբողջ փորձառությունն ու գիտելիքների պաշարը սովորեցնում ու ավանդում է Վանքի դպրոցի իր սաներին:

Հովհանյանը արձանագրում է, որ այդ ժամանակ Ջուղայում բարգավաճել էր վաճառականությունը, և Նշանավոր իշխանները հոգ էին տանում, որ իրենց զավակները հատկապես «հաշւապահութիւն» սովորեն՝ բավարար համարելով՝ սովորական գրքերի ընթերցումն ու գրագիտությունը, ուստի՝ «Կոստանդ վարժապետը դասաւանդում էր թաւաբանութիւն, սովորական ընթերցանութիւն, գրագիտութիւն եւ մեծ մասամբ խրատ վաճառականութեան մասին»⁴:

Պատմագրի վկայությամբ՝ 1687 թվականին Կոստանդ վարժապետը պատրաստել էր մի գիրք, որի մեջ կային «խառն առարկաներ, այսինքն՝

1 Տե՛ս նույն տեղը: Թուղթը գրել է Ստեփաննոս Ջուղայեցին 1696 թ-ին:

2 Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ Վանք, ձեռ. № 12-221բ:

3 Բալդարյան Ս., նույն տեղը, էջ 33:

4 Տե՛ր-Յովհաննէան Յ., նույն տեղը, էջ 586:

վաճառականության համար խրատներ, թաքանակության սկզբունք, ազարիայի թականի գործածությունը եւ ուրիշ խառը պարագաներ, որոնց համար այդ մատենը կոչւեց «Աշխարհաժողով»¹:

Փաստորեն 17-րդ դարի երկրորդ կեսին Կոստանդ Ջուղայեցու շնորհիվ Նոր Ջուղայից սերող հայ վաճառականները ունեին բացառիկ հնարավորություն օգտվելու առևտրական-մասնագիտական հայերեն գրականությունից, որի առաջին նմուշները՝ «Արիեստ համարողութեան», «Աշխարհաժողով» ու «Դռներն ռաղամին» խորագրերով, հեղինակել էր Կոստանդ Ջուղայեցին:

Նրա մատենագրական ժառանգության մասին առկա պատկերացումները սահմանափակվում են միմիայն հայ վաճառականության պատմությանը առնչվող դրվագներով, մասնավորապես՝ «Աշխարհաժողով» դասագրքով՝ սովորելով դրանց գեղարվեստական արժեքը և շրջանցելով հեղինակից մեզ հասած գրական ժառանգությունը, որոնք կարող են լրացնել 17-18 դարի Նոր Ջուղայի գրական գործունեության համայնապատկերը: Սրա հիմնական պատճառը Կոստանդի աշխատությունների մեծ մասի անտիպ մնալն է: Այն էլ այն դեպքում, երբ հայկական տպարաններ կային եվրոպական քաղաքներում Վենետիկից մինչև Ամստերդամ, իսկ Նոր Ջուղայում 1638 թվականին արդեն Սբ. Ամենափրկիչ Վանքում բացվել էր Իրանի և Մերձավոր Արևելքի առաջին տպարանը:

Բանն այն է, որ տեխնիկական դժվարություններով պայմանավորված՝ 1687-1693 թթ հիշյալ տպարանի գործունեությունը խիստ սահմանափակված է եղել²: Այս շրջանին էլ զուգադիպել է Կոստանդ Ջուղայեցու երկերի ստեղծումը: Հետևաբար դրանց մեծ մասը մնացել են անտիպ:

Կոստանդի միակ տպագիր գիրքը

Նրա հեղինակած երկերից տպագրվել է միայն մեկը՝ «Արիեստ համարողութեան. ամբողջ եւ կատարեալ» գիրքը, որը «հայ լեզվով տպագրված թվաբանական առաջին դասագիրքն է»³: Այն տպագրվել է Մարսելում՝ Ոսկան Երևանցու տպարանում, 1675 թվականին «ի պետս Հայկազունեաց և մանավանդ վաճառականաց»⁴:

1 «Աշխարհաժողով» մատյանի ձեռագրի մեկ օրինակը պահվում է Սբ. Ամենափրկիչ Վանքի մատենադարանում, Ձեռագիր № 64:

2 Aslanina S., The Early Arrival of Print in Safavid Iran, pp. 462-463: (Ըստ Բալդարյանի, էջ 32)

3 Անասյան Հ., Հայկական մատենագրություն (Ե-ԺԸ դդ.), Ի. Բ, Եր., 1976, էջ 874:

4 Արիեստ համարողութեան ամբողջ եւ կատարեալ, Մարսել 1675, տիտղոսաթերթ (առանց էջահամարի):

Առաջաբանը ամփոփվում է հետևյալ կերպ. «Ուստի աղաչեմք զվայ-
լօսս սորին զի յեշեցեն 'ի յաղթօս զաշխատարարս և զմատակարարս սո-
րին. և մանաւանդ զՈսկան վարդապետն զհանգուցեալն 'ի Քրիստոս»¹:
Այստեղ չի նշվում հեղինակի անունը, բացի դրանից՝ առաջաբանում ար-
ված որոշ նշումներ թուրքիմացության տեղիք են տվել հեղինակի բացա-
հայտման հարցում: Այս է պատճառը, որ Նույն գիրքը «խոշոր Նորոպ-
յուն»² որակող Լեոն Նույնպետ չի ճանաչում ու չի հիշատակում Կոստան-
դինոբայես գրքի հեղինակի:

Ինչպես «Առաջաբան գրքոյս» բաժնում է բնութագրված, աշխատույթ-
յունը հանրամատչելի դարձնելու նպատակով «թարգմանված է»։ «Եւ մա-
նաւանդ զի աշխարհականաւ ոճիւ է շարադրեալ»³: Գրաբարով են միայն
գրքի առաջաբանն ու հիշատակարանը:

Այն մասին, որ երկի հեղինակային իրավունքները պատկանում
են Կոստանդ Չուղայեցուն, առաջին հիշատակությունը արել է Հակոբ
Անասյանը: Վերջինս, երկը Կոստանդ Չուղայեցու այլ աշխատանքների
հետ համեմատելով, նկատում է բառապաշարի, տերմինաբանության և
ոճական առանձնահատկությունների ընդհանրություն: «Այս դասագիր-
քը պիտի կազմված լինի Նոր Չուղայում և ամենայն հավանականությա-
յամբ հեղինակությունն է հայտնի մանկավարժ Կոստանդ Չուղայեցու,
որը 1680-ական թթ, Նոր Չուղայի Ամենափրկիչ վանքի ուսումնարանում
առևտրական մասնագիտական դասընթաց էր վարում»⁴:

Սա Նույն աշխատությունն է, որը Ռ. Իշխանյանը համարում է առաջին
աշխարհաբար գիրքը. «Արհեստ համարողութեան»-ը առայժմ հայտնի
առաջին տպագիր գիրքն է, որի լեզուն ժամանակակից գրական հայերե-
նի՝ ԺԵ դարում գործածված մի տարբերակն է: Ահա այս խմաստով է այն
առաջին աշխարհաբար գիրքը»⁵:

Կոստանդ Չուղայեցուն պատկանող մյուս երկու ծեռնարկներն են՝
«Աշխարհաժողովը» և «Դռներն ռաղամին», որոնք գրեթե միշտ ներկա-
յացվել են մեկ միասնական երկի շրջանակում՝ «Աշխարհաժողով» վեր-
նագրով: Պատճառն այն է, որ սրանք առկա ծեռագրերում գրեթե միշտ
ընդօրինակվել են հաջորդաբար: Մինչդեռ համարվում են առանձին գոր-
ծեր: Ըստ Ասլանյանի՝ սրանցից առաջինը պատմական է և ներկայաց-
նում է տարբեր երկրների դրամների, չափերի, կշիռների, մաքսերի մա-
սին տեղեկություններ, իսկ երկրորդը գործնական է, որտեղ բերված են

1 Նույն Տեղը, «Առաջաբանութիւն գրգոյս» (համարակալված չէ):

2 Լեոն, Երկերի ժողովածու, հ.3, Եր., 1969, էջ 450:

3 Նույն Տեղը, «Առաջաբանութիւն գրգոյս» (համարակալված չէ):

4 Անասյան Հ., Նույն տեղը, էջ 876:

5 Իշխանյան Ռ., Նոր գրական հայերենը, 17-18 դարերում, Եր., 1979, էջ 34-35:

թվաբանական խնդիրներ, մինչդեռ «նրա այդ դասագրքերի հետ կապված տեսական մասը, որը պիտի ավանդեր համարողության հիմունքները, մեզ չի հասել»¹: Թերևս այս բաժինը հենց այն է, ինչն ընկած է «Արհեստ համարողութեան» գրքի հիմքում:

Աշխարհաժողով

Կոստանդ Ջուղայեցին հայտնի է իր «Աշխարհաժողով» ձեռնարկ-դասագրքով, որով էլ հիմնականում նա հիշատակվում է պատմաբանների կողմից: Այն մեզ հասել է 6 ձեռագիր ընդօրինակություններով.

Ա. Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8443, 1687 թ., 19ա-168ա:

Բ. Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 10704, 1710 թ., 25ա-63ա:

Գ. Մ. Մաշտեցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5994, 18-րդ դար, 1ա-27բ:

Դ. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, Ձեռ. № 64, 1687 թ., 7ա-47ա:

Ե. Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. № f 14, 1687 թ., 34ա-59բ:

Զ. Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. . № f 15, 1712 թ., 3բ-24բ:

Առկա ընդօրինակություններից երեքը գրվել են Նոր Ջուղայում 1687 թվականին, որը հիշատակվում է որպես դասագրքի կազմության տարեթիվ²: Սա հավաստում է, որ Կոստանդ վարժապետը հենց այդ թվականին էլ ավարտել է գրքի պատրաստման աշխատանքները:

Մեր ուսումնասիրության առարկան է Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» մատյանի հնագույն տարբերակներից մեկը, որը գտնվում է Սբ. Ամենափրկիչ վանքի Մատենադարանում³: Մեր նպատակն է ներկայացնել ձեռագրում ամփոփված Կոստանդ Ջուղայեցու հեղինակած գործերը և դրանց գեղարվեստական առանձնահատկությունները:

Մատյանը որպես դասագիրք-ձեռնարկ ամփոփում է բազմաթիվ նյութեր, որոնք գրի են առնվել տարբեր ժամանակներում՝ տարբեր գրիչների միջոցով: Ստորև բերված են մատյանում տեղ գտած բոլոր գործերը.

1 Անասյան Հ., Նույն տեղը, էջ 876:

2 Տեր-Յովհանեան Յ., Նույն տեղը, էջ 586:

3 Նոր Ջուղա, Սբ. Ամենափրկիչ վանք, ձեռ. № 64: Մատյանի տվյալներն են. գրչության թվական 1680-1695 թթ.: Տեղ՝ Նոր Ջուղա: Ստացող՝ Աւետ: Թերթ՝ 322: Թուղթ՝ 15x10: Տող՝ 15: Միասին: Նոտրագիր: Նկարագրել է Ս. Տեր-Ավետիսյանը 1970 թ.: (Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի, հ. Ա, էջ 857-858:)

1. Վասն Նորայրու մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատ
2. Ողբ Հայաստանաց աշխարհի Յերևանայ եւ Ջուղայու
3. Խրատք խիկարայ (4 խրատ)
4. Հայր Մերը (ընթրօրինակված է երկու անգամ)
5. Տոմար Ագարիային
6. Հարցմունք եւ պատասխանի
7. Կարդա մանուկ, ուսի սիրով(Կոստանդի մի ոտանավոր)
8. Փառք քեզ Հայր երկնաւոր(Կոստանդի մի ոտանավոր)
9. Այբն ամենեքեան է օրինակ (Կոստանդի խրատական մի ոտանավոր Այբուբենի վրա գրած)
10. Տաղ վասն հոգեվարին վերայ(ասացեալ ի Տէր Առաքել Սիւնեցի)
11. Տաղ վասն ահեղ դատաստանի. յոյժ գեղեցիկ. Արտագրեալ ի տէր առաքեալ սիւնեցի
12. Երեք չափածո աղոթք
13. Վասն վիճաբանության հոգոյ և մարմնոյ ընդ միմիանս (Բուդաղօղլի Ղազիխանի գրած)
14. Թուղթ Սրբոյն Դիոնէսի առ Տիմոթէոս՝ Յաղագս մահուանն Պետրոսի Պօղոսի և Պողոսի

Եւ վաճ գործերից հինգը՝ «Վասն Նորայրու մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատ», «Հարցմունք եւ պատասխանի», «Կարդա մանուկ, ուսի սիրով», «Փառք քեզ Հայր երկնաւոր», «Այբն ամենեքեան է օրինակ», պատկանում են Կոստանդ Ջուլայեցու գրչին:


Ձեռագիրը առանձնահատուկ է նրանով, որ այն պահպանել է բազմաթիվ հիշատակարաններ(երկու տասնյակից ավելի), որոնք ներկայացնում են տարբեր գործերի ընթրօրինակման ժամանակը, ինչպէս նաև՝ հետաքրքիր փաստեր են պարունակում գրքի օգտագործման ժամանակագրական ու աշխարհագրական ընդգրկունության մասին, նաև կենսագրական տվյալներ են հաղորդում գիրքը օգտագործած վաճառականների վերաբերյալ:

«Վասն Նորայրու մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատ»

Մատյանը սկսվում է «Վասն Նորայրու մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատ» վերնագիրը կրող բաժնով¹, որտեղ ամփոփ-

¹ Նոր Ջուղա, Սբ. Ամենափրկիչ Վանք, ծեռ № 64, էջ 1: (Այսուհետ բոլոր մեջբերումները կարվեն նույն մատյանից, ուստի կնշենք միայն էջերը):

ված են Կոստանդի վաճառականական երկու ձեռնարկները: Ինչպես վերը նշվեց, այս երկու բաժինները դիտարկվում են որպես մեկ ընդհանուր աշխարություն՝ «Աշխարհաժողով» անունով, որոնցից առաջ գրված հիշատակարաններում նշվում է Նույն տարեթիվը՝ 1687: Երկու մասերի միջև գրված հիշատակարանում կարդում ենք. «եղև ըսպահան Ջուղայու վանք սբ. Ամենափրկումն թիւն Փրկչին Ռ. Ռ. Ձ. Է. (1687): Ի թագաւորութեան Շահ Ալեմանին և կաթողիկոսութեամբ Տեր Եղիազարու և առաջնորդութեամբ ըստեփանոս վարդապետին. և իշխանութեամբ քալանթար խօջայ Ղուկասին. և աշխատութեամբանարժան՝ մեր վարպետ Կոստանդին յիշեցեք ի սբ. յաղօթս ձեր և դուք յիշեայ յիջիք իմս. Ամէն.»(էջ 1):



Նախատեսված լինելով ապագա վաճառականներին կրթելու համարձեռնարկը ժամանակի առևտրական ախարիի մասին ամենակարևոր ու առձեռն տեղեկությունների մի ամբողջ հանրագիտարան է, որը պատմում է Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի տարբեր երկրների ու քաղաքների, գետերի և վաճառվող ապրանքների, դրանց գների, դրամական միավորների և այլ անհրաժեշտ առևտրական գիտելիքների մասին, որոնք լիովին բավարարում էին Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցի շուրջ միավորված հայ վաճառականների կարիքները և օգնում «նորայյուս» վաճառականներին մտնել առևտրական մեծ աշխարհ:

Ձեռնարկի առաջին գնահատականը տալիս է գրքի առաջին բաժինը ընդօրինակած գրիչը, որը Կոստանդի աշակերտներից մեկն է, և առաջին հիշատակարանում գրում է. «Գրվեցաւ գիրքս այս արվեստին խիստ է բարի հիմանողին. դռներն է սայ ռաղամին, անհասանելի է ամենայնին, բաւական է այսքան շրջողին, միտքն բոլորվի ուսանողին» (էջ 1-2):

Գիրքը, ինչպես վերնագիրն է հուշում, խրատական երկ է և որպես միջնադարյան ժանրի օրինակ ունի գեղարվեստական առանձնահատկություններ: Այն գրված է միջնադարյան հարցուպատասխանի ձևով՝ ամենասկզբից որոշելով երկի հասցեատերերին. «Ո՛վ եղբայր, վաճառական ես, թե՞ կուզես վաճառական լինես»(էջ 2):

Այնուհետև վաճառական դառնալ ցանկացող վաճառականի որդին

խնդրում է իրեն խրատներ տալ. «Ունե՞ս ինչ մի խրատ վասն իմոյ շահաւետութեան» (Էջ 2), որից հետո կանոնական խրատների տեսքով հյուսվում է երկը:

Բովանդակային առումով այն ընդգրկում է երկու տեսակի խրատներ՝ «կայ խրատ ի սուրբ գրոց և կայ խրատ բազմաշրջիկ ծերոց» (Էջ 3): Առաջին տեսակի խրատները սուրբգրային մոտիվների հղումներ են ենթադրում և կրոնական, բարոյական դասեր են տալիս դպրոցի սաներին: Այս շարքը սկսվում է Նորկտակարանային գլխավոր ուսմունքներից մեկով, այն է՝ «Եթե կամիցես մարդիք քեզ ինչ արասցես. արասցես և դու Նոցայ» (Էջ 3):

Անարդար և վտանգներով ու փորձություններով լի վաճառականական աշխարհի համար փաստորեն Նոր որակ և տեսակ էր դաստիարակում Կոստանդ Ջուղայեցին, որը հակադրվում էր միջավայրի կանոններին և հաղթում դրան.

«Մի լինել ստայիսու. մի լինել քուֆրատու, մի լինել գրկող. մի լինել գրկող. մի լինել ուխտագանց... ...այլ լեր հեզ և խոնար, երկանամիտ և համբերող և որչափ որ գիտուն լինես հարց և այլոցն. որ առաւել ևս գիտենաս և որչափ որ բարձրանաս դու քեզ խոնար կալ քան զամենայն:», «Ինչ Աստուած շնորհեսցէ քեզ, անօվն¹ շատացի՞ր², այլոցն մի՛ կողոպտեր եւ որբն մի՛ գրկեր, մշակին հախն³ առ քեզ մի՛ պահեր»: (Էջ 5)

Կրոնական-բարոյական խրատների կողքին Նա սովորեցնում է վաճառական կյանքի սկզբունքները, որոնք հիմնականում սեփական փորձից ստացած դասեր են: Այդպիսիք են օրինակ՝

«...քիսակիտ բերանը բաց մի թողու. Կապէ և մրէ»,

«Անփորձ մարդի փոխ և ամանաթ մի տալ»,

«Բայց զամենայն առջտ և տուրտ գրեայ գրեայ և գրեայ» և այլն: (Էջ 6)

Այս խրատներից հետո վաճառական դառնալ ցանկացող սանը խնդրում է հեղինակին, որ իրեն ծանոթացնի վաճառականության գրադվելու համար անհրաժեշտ բոլոր գիտելիքներին. «քաղաքէ քաղաք, երկրէ յերկիր ապրանսաց ապրանքի որպէսութիւնն, չափերն, քաշերն, փողերն ըստակներն և ամենայն ինչ ասացես» (Էջ 7): Երկի մեծ մասը կազմված է ահա այս տեղեկություններից, որոնց զուգահեռ Նա պատմում է տարբեր երկրների բնության, կենդանիների, եղանակի, դրանց օրենքների, դավանանքի, ժողովուրդների բարքերի, կենացադի մասին՝ մեջբերելով իր լսած հետաքրքիր գրույցները:

1 Նրանով

2 գոհացիր

3 Իրավունք, բաժին

Հյուսվող երկխոսության լեզուն Նոր Զուղայի բարբառն է՝ համեմված վաճառականների միջավայրին բնորոշ բառապաշարով ու տերմինաբանությամբ։ Այս անմիջական զրույցի մեջ գեղարվեստական հնարքների միջոցով շատ դիպուկ և հստակ արտացոլվում են առևտրական կյանքի առօրյան ու կենսակերպը։

P. SICHEL

Սկզբի առաջաբան-հիշատակարանում կարդում ենք, որ այն ընդօրինակվել է Նոր Զուղայի Վանքում 1685 թվականին (Ռ.Ռ.Զ.Ե.):

199

Երկը բովանդակային իմաստով գերազանցապես հիմնված է Աստվածաշնչի և հոգևոր գրականության ուսմունքների վրա, այն, ինչը հիմնականում կարդում ու սովորեցնում էին Վանքի դպրոցում:

Սկսելով Հին Կտակարանից՝ ուսուցիչը առանձին-առանձին հարցնում է այն բոլոր գիտելիքները, որ Վանքի սանը պետք է իմանա. «Գիտես ՉԱստուած: Ով է Աստուած: Չինչ արար կամ գինչ ըստեղծ.», «Գիտես Նահապետքն», «Գիտես մարգարեքն» և այլն: Այնուհետև յուրաքանչյուր հարցին հետևում է աշակերտի պատասխանը՝ «Գիտեմ և ասեմ» արտահայտությամբ սկսելով:

Կրոնական թեմաներից բացի՝ այն ընդգրկում է նաև աշխարհաճանաչողական նյութերի մի շարք:

Օրինակ՝

«Գիտես ժամն.

Գիտեմ և ասեմ. ժամն է սահաթ. որ գիշեր և ցերեկ ի.դ. (24) սահաթայ.» (Էջ 429)

Կամ՝

«Գիտես կենդանակերպն.

Գիտեմ և ասեմ. երկուտասան որ մականուն տանուտեր կոչեմք ի տօմարին. որ է խոյն. ցուլն» (Էջ 434)

Աշխատությունը ներառված է եղել Վանքում դասավանդվող ուսումնական ձեռնարկների շարքում: Սրա մասին վկայում է նաև երկի հիշատարակարանին հաջորդող խրատական բանաստեղծությունը, որը բերված է հաջորդիվ:

Կոստանդի երեք բանաստեղծությունները

Ա. «Կարդա մանուկ, ուսի սիրով»¹

Սա խրատական մի ոտանավոր է, որտեղ հեղինակը հորդորում է մանուկներին լավ սովորել: Հարություն Տեր-Հովհանյանը իր պատմության մեջ, գրի առնելով ոտանավորը, նշում է, որ այն իր ժամանակ (19-րդ դարի առաջին կես) երգվում էր դպրոցական աշակերտների կողմից: Ստորև ամբողջությամբ բերված է ոտանավորը.

Կարդա՛ մանուկ, ուսի սիրով,
Չարմանազան բանք ասելով,
Որոք լսենունկ դնելով,
Գովես ըզբեզ փառս տալով:


¹Նույն տեղը, էջ 454-455:

Սաղմոս կարգեաց Դավիթ արքայն,
Յամեն մարդոց է պատվական,
Տերն տայ քեզ միտք բանական,
Վարժ ապով ամեն բան:

Աշխատութեամբ դու գիր ուսար,
Աղօթելով լինես արդար,
Նաւահանգիստ ահա գտար,
Խոնարհութեամբ դրատեցար:

Դաւանութեամբ խոստովանես,
Ձերմ արտասօք մեղայ գոչես,
Քահանայից գործքն յայտնես,
Սուրբ հաղորդին արժան լինես:

Կոստանդ դու քո մեղքն ասիր,
Լալով առ Աստուած յուսացիր,
Բանք հարցմանց ժողովեցիր,
Թողիր աշխարհս գնացիր:



Բ. «Փառք քեզ Հայր երկնաստոր»¹


Երկրորդը մի մեղայական ոտանավոր է: Այն աղոթք-բանաստեղծություն է հիշեցնում բացառապես կրոնական բովանդակությամբ, որտեղ հղումներ են արվում հին և նոր կտակարանների թեմաներին՝ կրկնելով հոգևոր կրթության հիմնական դասերը: Բանաստեղծությունը սկսվում է Ադամ-Եվայի արարումի, առաջին մեղքի և դրախտից վտարվելու դրվագների պատկերներով.

Դիրի և ի մեջ դրախտին.
Լուսով ըսգեստն աւելի.
Ագայեցաւ² նայ ճաշակեաց.
Էն աստուածային պտուղն ավելի. (Էջ 456)

1 Նույն տեղը, էջ 456-460:

2 ագահացավ

Այնուհետև Քրիստոսի ծնունդով, նրա կյանքի ու քարոզչության հղումներով ավետում է մարդու փրկության ճանապարհների մասին.



Եթե ուզենաս արքայություն.
Գործեայ զբարին աւելի.
Եթե կամօք զաշխարս թողուս.
Թահմահ չանես դու աւելի. (Էջ 458)

Ոտանավորը գրված է վաճառական համայնքի համար և նպատակ ունի հետ պահելու նրանց ազատության մեծ մեղքից. «Ի վաճառէտ ինչ շայեցար./ Զան ըզպատանքտ աւելի». (Էջ 458): Այն ավարտվում է հեղինակի անվան հիշատակությամբ, ով ընդունում է իր մեղավորությունը և թողության ելքեր փնտրում.

Քո անունտ Կոստանդ կոչի.
Մեղօք լցեալ ես աւելի.
Սանծեայ դու քեզ խոն[արի]աբար.
Թողութիւն գտցես աւելի. (Էջ 459-460)

Ստորև բերված է բանաստեղծությունը: Նույնությամբ պահպանված են գրության ձևերը.

«Փառք քեզ հայր երկնաւոր»
Փառք քեզ Հայր երկնաւոր
Որ չափիմ կարիքս աւելի.
Ըստեղծեր ադամս հողու .և ջրու
քեզ բարեբանես աւելի
Դիրի և ի մէջ դրախտին.
Լուսով ըսգեստն աւելի.
Ազայեցաւ նայ ճաշակեաց.
Էն Աստուածային պտուղն ավելի.
Արտաքսեցաւ նայ դրախտն.
Տրտմեցաւ գլափսն աւելի.
Տըրտում կույր զայրն ի հոգի.

Հրեշտակ անտեսաց անելի.
 Ած դրդի մարմնով ցնծի.
 Ի քնն ուրախ լեր անելի.
 Ծնաւ կուսէն ած և մարդ
 Ըսքանչելի է անելի.
 Ժողովեաց նայ աշակերտեր.
 Երկուտասան թէ անելի
 Առաքեաց քարոզութեան.
 Հոգովն սրբով լի անելի.
 Ուսեալ [....] և ուսուցին.
 Աւատացելոցն անելի.
 Մկրտեացեան. [իմսէ].
 Դաւանութիւնն անելի.
 Հարապետք և մարտիրոսք
 Կուսանքն ճգնաւորն անելի.
 Աղօթելով հաստատեցին.
 Կանոնք օրինացն անելի.
 Ով հնազանդ է օրինացն
 Աստուածասերերն անելի.
 Նայ յուս ունի արքայաութեան.
 Աղօթելով զայն անելի.
 Ով հնազանդ չէ օրինաց.
 Գող և պոռնիկն սուտն անելի.
 Է գիրէ յիշեայ օրն մահուտ.
 Դժոխք և տանքանքն անելի.
 Ամեղք եկիր դու ի հաշիւարս.
 Մեղօք դու գնաս անելի.
 Եթէ ուզենաս արքայութիւն.
 Գործեայ զբարին անելի.
 Եթէ կամօք զաշխարս թողուս.
 Թահմահ չանես դու անելի.
 Ի վաճառէտ ինչ շայեցար.
 Քան ըզպատանքտ անելի.
 Սուտ ասելով քուֆր տալով.
 Ազայութենտ անելի.
 Դառցիր առ տր ախօթելով.
 Լաց քո չար գործն անելի.

Արքայութեան դուռն բանայ
Տեսնուս քան զաշխարս աւելի.
Գնաս ի մէջն փառաբանես.
Ուրախութեանդ աւելի.
Սփռուի յամենայն ժամ.
Տարածեալ լուսն աւելի.
Քո անուանտ Կոստանդ կոչի.
Մեղօք լցեալ ես աւելի.
Սանձեայ դու քեզ խոն աբար.
Թողութիւն գտցես աւելի.

Գ. «Այբն ամենեքեան է օրինակ»¹

Կոստանդի երրորդ ոտանաւորը, որը տեղ է գտել իր դասագրքում, այբուբենի վրա գրված խրատների մի շարքէ, որտեղ յուրաքանչյուր տառով սկսվող մի խրատ է տալիս աշակերտներին:

Ենթադրվում է, որ այն գրված է եղել հայոց այբուբենը սաներին անգիր սովորեցնելու նպատակով՝ դրանց օգնությամբ անգիր սովորել տալովնաև հոգևոր ու բարոյախրատական կարևորագույն դասերը, որոնցից մի քանիսն են՝

Բենն բագում տա քեզ խրատ
Թե մեղաց փախչիր իզատ. 461


Գեմն գործոց բարեաց ասե
առիթ կենաց որ ովք լսե. 461

Դայն դու տղայ ես հասակով
Մի ծով կենար մրափելով.

Է մեծագուն փառք աշխարհի
այն որ ուսմանց ետևեսցե.

Ընկալ խրատ մանուկ տղայ
և սբ. գրոց միշտ ծառայեայ.

Մեծ ամօթ ի մէջ մարդկան
որ չունենայ փափակ ուսման.



¹Նույն տեղը, էջ 461-469:

Այբուբենի հերթագայությամբ ստեղծված խրատական շարքերի հանդիպում ենք Նան Ներսես Շնորհալու գործերում, որոնց և՛ ոճական, և՛ բովանդակային առումով նման են Կոստանոյ Ջուլայեցուն խրատները: Գրականագետ Վազգեն Սաֆարյանը, խոսելով Շնորհալու՝ այբուբենի հերթագայությամբ ստեղծված խրատների մասին, առանձնացնում է հատկապես աշխարհիկ բովանդակություն ունեցող «Բան Ներտաղական ի խրատ ոգւոց համայնից» շարքը, որտեղ նույնպես խրախուսվում է ուսումնառությունը. «Մանուկներին խրատելու առանցքը ուսման նկատմամբ սիրո սերմանումն է, այն, որ պետք չէ «Մնտո խաղօք անտանալ», այլ անհրաժեշտ է իմաստությանը հետևել, «Եւ յուսմանէ ոչ ձանձրանալ»:

Ձ-այն

Ձայնէ առ քեզ, մանուկ ուշիմ,

Թէ ականջօք լուր զբանս իմ.

Ուսման գրոց լեր մտերիմ:»¹(Ներսես Շնորհալի)

Կոստանոյը, ինչպես Վանքի մյուս ուսուցիչները, մեծ տեղ է տվել կրթությանը: Ակնհայտորեն հոգևոր թեմայից հետո ամենից շատ հանդիպում են «ուսում փափագելու» և դրա կարևորության մասին խրատները:

Վաճառականության մասին աշխատությունները շարունակում են մնալ Կոստանոյ Ջուլայեցուն լավագույն երկերը: Դրանք և սույն աշխատանքում ներկայացված գործերը, բացի ժամանակի ու միջավայրի կենդանի պատկերներ տալուց, առանձնապես գեղարվեստական մեծ արժեք չեն ներկայացնում: Բայց այնուհանդերձ մատենագիտական և հայ մանկավարժության պատմության տեսանկյունից հարուստ աղբյուրներ են:

Սոսե Բողոզյան -գեաղվում է Նոր Ջուլայի 17-18-րդ դարերի գրական-մշակութային կյանքի հարցերով: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ գրականության պատմության, Նոր Ջուլայի հայ մատենագրության և տաղերգության բնագավառները: Ունի չորս տպագրված հոդված:

Էլ. հասցե՝ sosse.bogozian@gmail.com

1 Սաֆարյան Վ., Հայ միջնադարյան գրականություն, Եր., 2016, էջ 219:

SOSEH BOGHOZIAN (NEW JULFA, IRAN) - SCHOOL OF THE SURB AMENAPRKICH MONASTERY AND THE TEXTBOOK BY KOSTANT JUGHAYETSI -

Kostant (also Kostantin) Jughayetsi is one of the key figures of New Julfa of the 17th century, a merchant, a scientist-monk, a pedagogue and a teacher of the school of the Surb Amenaprkich monastery. He is the author of the first Armenian trade textbook "Compendium" and the founder of the trade literature genre in the Armenian literature.

He has written "The Art of Arithmetic", "The Introduction to Arithmetic" and "Compendium", which summarize the knowledge and experience gained over the years of his trade activities.

Our article is devoted to the chronicle heritage of Kostant Jughayetsi, in particular, to the works included in his textbook "Compendium": "Instruction for Newly Learned and Young Merchants", "Question and Answer", "Read, Baby, Learn with Love", "Glory to You, the Heavenly Father" and "Ayb is an Example for All". One of the ancient copies of the "Compendium", being in the book depository of the Surb Amenaprkich Monastery of New Julfa, is the subject of our research.

The "Commercial Commandment" by Kostant Jughayetsi is a whole encyclopedia of the materials necessary for the trade business, which summarizes advice and knowledge related to this area. The remaining works mainly represent the samples of the medieval instructions of the secular and spiritual content.

Although these works do not represent great artistic value, they contain valuable information about the everyday life of that time and supplement the picture of the literary heritage of New Julfa, being an important source of the history of the Armenian pedagogy and bibliography.

Keywords: *Kostant Jughayetsi, the Compendium, Instruction for Newly Learned and Young Merchants, New Julfa, a school of the Surb Amenaprkich Monastery, the colony, merchants of New Julfa, the trade textbook, authors-merchants, the literary heritage of New Julfa, the bibliography of New Julfa.*

СОСЕ БОГОЗЯН (НОР-ДЖУГА, ИРАН) - ШКОЛА МОНАСТЫРЯ СУРБ АМЕНАПРКИЧ И УЧЕБНИК КОСТАНТА ДЖУГАЕЦИ -

Костант (также Костантин) Джугаеци — одна из ключевых фигур Новой Джульфы XVII в., купец, ученый монах, педагог, преподаватель школы монастыря Сурб Аменапркич. Он является автором первого армянского торгового учебника «Компендиум» и основоположником жанра торговой литературы в армянской литературе.

Его перу принадлежат «Искусство арифметики», «Введение в арифметику»

и «Компендиум», которые обобщают знания и опыт, накопленные за годы его торговой деятельности.

Наша статья посвящена летописному наследию Костанта Джугаеци, в частности произведениям, вошедшим в его учебник «Компендиум»: «Наставление новообучающимся и молодым купцам», «Вопрос и ответ», «Читай, малыш, учись с любовью», «Слава тебе, небесный Отец» и «Айб для всех пример». Предметом нашего исследования является одна из древних копий «Компендиума», находящаяся в книгохранилище монастыря Сурб Аменапркич Новой Джульфы.

«Коммерческаязаповедь» Костанта Джугаеци — это целая энциклопедия материалов, необходимых для торгового дела, в которой обобщаются советы и знания, относящиеся к этой сфере. Остальные труды в основном представляют собой образцы средневековых наставлений светского и духовного содержания.

Эти произведения, хотя и не представляют большой художественной ценности, однако содержат ценные сведения о жизни и быте того времени, дополняют картину литературного наследия Новой Джульфы, являясь важным источником истории армянской педагогики и библиографии.

Ключевые слова: Костант Джугаеци, Компендиум, Наставление новообучающимся и молодым купцам, Новая Джульфа, школа монастыря Сурб Аменапркич, колония, купцы Новой Джульфы, торговый учебник, авторы-купцы, литературное наследие Новой Джульфы, библиография Новой Джульфы.

DOI: 10.54503/1829-0116-2022.1-188